Վահան Տերյան

Իմ ցնորքին

Անե՛յլա, ոչ ոք դեռ չի համբուրել
Շուրթերդ մւսքուր, կուրծքդ դողդոջուն,
Ո՞վ է քո անուշ աչքերը վառել
Այս աղջամուղջում…

Խավար օրերի երազում դժգույն
Հայտնվում ես դու արշալույսի պես,
Պոետը քեզ է երազում անքուն
Ու պաշտում է քեզ:

Գեղեցկությունդ վառված է բոցե
Դաշույնի նման սև կյանքի վրա.
Թող կարոտ սիրտս մահացու խոցե
Եվ թող չերերա…

Գեղեցկությանդ, որպես մահապարտ,
Երկրպագում է բանաստեղծը միշտ
Եվ ողջունում է խնդությամբ հպարտ
Տառապանք ու վիշտ:

Անե՛յլա, ոչ ոք դեռ չի համբուրել
Շուրթերդ մաքուր, կուրծքդ դողդոջուն,
Ո՞վ է քո ոսկի ժպիտը վառել

Այս աղջամուղջում…